

**ԱՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**ԱՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՆ
2018 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ
Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*ք. Ստեփանակերտ
2018թ.*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

| | |
|---|-------|
| ՆԱԽԱԲԱՆ..... | 3-4 |
| Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներ..... | 5-8 |
| 1.1 Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ | 9-11 |
| 1.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներ..... | 11-16 |
| 1.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքներ..... | 17-19 |
| 1.3 Հողամասերի առուվաճառքի գործարքներ..... | 20-23 |
| 2. Անշարժ գույքի նվիրատվության գործարքներ..... | 24-25 |
| 3. Անշարժ գույքի գրավադրման գործարքներ..... | 26-28 |
| 3.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների /առանձնատների/ գրավադրման գործարքներ..... | 28-30 |
| 3.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքներ..... | 31-33 |
| 4. Անշարժ գույքի վարձակալության գործարքներ..... | 33-35 |
| 4.1 Հողամասերի վարձակալության գործարքներ..... | 36-37 |
| 5. Անշարժ գույքի ժառանգության գործարքներ..... | 38-40 |
| 6. Անշարժ գույքի առաջնային գրանցումներ..... | 40-42 |

**Արցախի Հանրապետության
անշարժ գույքի շուկան 2018թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում**

ՆԱԽԱԲԱՆ


Սույն վերլուծությունը կատարվել է ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության բաժիններից, 2018թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ ստացված տվյալների և հանրապետության անշարժ գույքի շուկայի դիտարկումներից հավաքագրված տեղեկությունների հիման վրա:

2018թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 6180 գործարք, որոնցից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ /5450 գործարք/ աճել է 13.4%-ով:


Հանրապետության շրջաններում գրանցված ընդհանուր գործարքներն՝ ըստ գույքի տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| Գույքի տեսակները | Հանրապետությունում |
|--|---------------------------|
| Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարաններ | 1182 |
| Բնակելի տներ /առանձնատներ/ | 1487 |
| Ավտոտրանսպորտ | 194 |
| Հասարակական նշանակության օբյեկտներ | 580 |
| Արտադրական նշանակության օբյեկտներ | 239 |
| Հողամասեր | 2498 |
| Ընդամենը | 6180 |

2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, բաշխված են հետևյալ կերպ.



Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներ

2018թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 6180 գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում: Այդ քանակների փոփոխություններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների, 2017 և 2018թթ. 9 ամսվա կտրվածքով ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2017թ. 9 ամիս | փոփոխություն | 2018թ. 9 ամիս |
|------------------------|--------------------------|---------------------|--------------------------|
| Ստեփանակերտ | 2133 | 24.7% | 2659 |
| Ասկերան | 757 | 22.7% | 929 |
| Մարտունի | 729 | 14.3% | 833 |
| Մարտակերտ | 313 | 35.1% | 423 |
| Հաղրուֆ | 230 | 61.3% | 371 |
| Շուշի | 244 | 3.7% | 253 |
| Քաշաթաղ | 930 | -37.4% | 582 |
| Շահումյան | 114 | 14.0% | 130 |
| Հանրապետություն | 5450 | 13.4% | 6180 |

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների բարձր տոկոսաչափ կազմել են առուվաճառքի՝ 23.3 % (2017թ. 9 ամսում գրավադրման՝ 21.2%), իսկ ցածր՝ փոխանակության՝ 0.3% (2017թ. 9 ամսում՝ մասնավորեցման՝ 0.1 %) գործարքները:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափ արձանագրվել է Ստեփանակերտում 43.0 % (2017թ. 9 ամսում 39.1 %), իսկ ցածր՝ 2.1 % Շահումյանի (2017թ. 9 ամսում՝ 2.1 %) շրջանում:

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | | |
|-----|------------------------------------|---|
| Հ/հ | Անշարժ գույքի տեսակները | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումի քանակը |
|-----|------------------------------------|---|


| | | <i>2017թ. 9 ամիս</i> | <i>փոփոխություն</i> | <i>2018թ. 9 ամիս</i> |
|---|-------------------------------------|--------------------------|---------------------|--------------------------|
| 1 | Բազմաբնակարան շենքի բնակարան | 1012 | 16.8% | 1182 |
| 2 | Բնակելի տուն/առանձնատուն/ | 1313 | 13.3% | 1487 |
| 3 | Ավտոտնակ | 148 | 31.1% | 194 |
| 4 | Հասարակական նշ. օբյեկտ | 447 | 29.8% | 580 |
| 5 | Արտադրական նշ. օբյեկտ | 213 | 12.2% | 239 |
| 6 | Հողամաս | 2317 | 7.8% | 2498 |
| | Ընդամենը | 5450 | 13.4% | 6180 |

2017 և 2018թթ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գրանցումներն՝ ըստ գործարքների տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.


| Գործարքների տեսակները | <i>2017թ. 9 ամիս</i> | <i>փոփոխություն</i> | <i>201թ. 9 ամիս</i> |
|---------------------------------------|--------------------------|---------------------|-------------------------|
| ԱՌՈՒՎԱՃԱՌՔ | 1015 | 41.9% | 1440 |
| ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 658 | 9.6% | 721 |
| ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 396 | 2.1 անգամ | 820 |
| ԳՐԱՎԱԴՐՈՒՄ | 1153 | -27.7% | 834 |
| ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ | 486 | 15.8% | 563 |
| ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ | 42 | -35.7% | 27 |
| ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ | 10 | 2.5 անգամ | 25 |
| ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ | 4 | 4-ով պակաս | 0 |
| ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ | 327 | 74.0% | 569 |
| ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ | 25 | -28.0% | 18 |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ | 94 | 73.4% | 163 |
| ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ | 911 | -24.6% | 687 |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ | 329 | -4.9% | 313 |
| Ընդամենը | 5450 | 13.4% | 6180 |

Ստորև ներկայացվել են հանրապետությունում 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական պատկերումները.

**Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակների փոփոխման դինամիկա**



**Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների
քանակական համեմատություն**



| h/h | Գործարքների տեսակները | Ստեփանակերտ | Ասկերան | Մարտունի | Մարտակերտ | Հարլուժ | Շուշի | Քաշաթաղ | Շահումյան | Հանրապետություն | Տոկոսաչափ |
|-----------------|-----------------------|-------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|-----------------|--------------|
| 1 | ԱՌՌԻՎԱՃԱՌՔ | 759 | 159 | 158 | 94 | 75 | 90 | 53 | 52 | 1440 | 23.3 |
| 2 | ՆԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 308 | 97 | 67 | 64 | 100 | 45 | 39 | 1 | 721 | 11.7 |
| 3 | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 74 | 200 | 202 | 62 | 103 | 5 | 143 | 31 | 820 | 13.3 |
| 4 | ԳՐԱՎԱԴՐՈՒՄ | 620 | 68 | 63 | 23 | 11 | 32 | 8 | 9 | 834 | 13.5 |
| 5 | ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ | 140 | 124 | 143 | 83 | 30 | 24 | 18 | 1 | 563 | 9.1 |
| 6 | ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ | 15 | 5 | 0 | 1 | 1 | 1 | 3 | 1 | 27 | 0.4 |
| 7 | ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ | 5 | 5 | 1 | 11 | 0 | 2 | 0 | 1 | 25 | 0.4 |
| 8 | ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0.0 |
| 9 | ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ | 247 | 80 | 80 | 32 | 9 | 26 | 90 | 5 | 569 | 9.2 |
| 10 | ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ | 16 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 18 | 0.3 |
| 11 | ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ | 108 | 12 | 7 | 2 | 5 | 5 | 10 | 14 | 163 | 2.6 |
| 12 | ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ | 304 | 78 | 55 | 26 | 19 | 18 | 187 | 0 | 687 | 11.1 |
| 13 | ԴԱԴԱՐՈՒՄ | 63 | 101 | 55 | 25 | 18 | 5 | 31 | 15 | 313 | 5.1 |
| Ընդամենը | | 2659 | 929 | 833 | 423 | 371 | 253 | 582 | 130 | 6180 | 100.0 |
| Տոկոսաչափ | | 43.0 | 15.0 | 13.5 | 6.8 | 6.0 | 4.1 | 9.4 | 2.1 | 100.0 | |

| Հ/h | Անշարժ գույքի տեսակները | Ստեփանակերտ | Ասկերան | Մարտունի | Մարտակերտ | Հարլուժ | Շուշի | Քաշաթաղ | Շահումյան | Հանրապետություն | Տոկոսաչափը |
|-----------------|----------------------------|-------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|-----------------|--------------|
| 1 | Բնակարան | 927 | 29 | 100 | 16 | 20 | 83 | 7 | 0 | 1182 | 19.1 |
| 2 | Բնակելի տուն /առանձնատուն/ | 546 | 222 | 188 | 145 | 73 | 71 | 237 | 5 | 1487 | 24.1 |
| 3 | Ավտոտնակ | 168 | 6 | 1 | 1 | 5 | 13 | 0 | 0 | 194 | 3.1 |
| 4 | Հասար.նշ.օբ. | 367 | 30 | 66 | 41 | 12 | 39 | 23 | 2 | 580 | 9.4 |
| 5 | Արտադ.նշ.օբ. | 103 | 36 | 26 | 17 | 18 | 1 | 26 | 12 | 239 | 3.9 |
| 6 | Հողամաս | 548 | 606 | 452 | 203 | 243 | 46 | 289 | 111 | 2498 | 40.4 |
| Ընդամենը | | 2659 | 929 | 833 | 423 | 371 | 253 | 582 | 130 | 6180 | 100.0 |
| Տոկոսաչափը | | 43.0 | 15.0 | 13.5 | 6.8 | 6.0 | 4.1 | 9.4 | 2.1 | 100.0 | |

1.Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է 1440 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2017թ. 9 ամսվա համեմատ աճել է 41.9 %-ով: Առուվաճառքի գործարքների գրանցումները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 23.3%-ը (2017թ. 9-ը ամսում՝ 18.6 %-ը) :

Առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափ արձանագրվել է Ստեփանակերտ քաղաքում՝ 52.7% (2017թ. 9-ը ամսում՝ 45.8%), իսկ ցածր՝ 3.6%, Շահումյանի (2017թ. 9-ը ամսում՝ Շահումյանի 4.3 %) շրջանում:

Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | 2017թ. 9 ամիս | փոփոխություն | 2018թ. 9 ամիս |
|------------------------|--------------------------|---------------------|--------------------------|
| Ստեփանակերտ | 465 | 63.2% | 759 |
| Ասկերան | 123 | 29.3% | 159 |
| Մարտունի | 174 | -9.2% | 158 |
| Մարտակերտ | 56 | 67.9% | 94 |
| Հաղրութ | 48 | 56.3% | 75 |
| Շուշի | 53 | 69.8% | 90 |
| Քաշաթաղ | 52 | 1.9% | 53 |
| Շահումյան | 44 | 18.2% | 52 |
| Հանրապետություն | 1015 | 41.9% | 1440 |

Անշարժ


գույքի

առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակները և նրանց փոփոխություններն՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.


| Հ/հ | Անշարժ գույքի տեսակները | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումի քանակը | | |
|-----|------------------------------|--|--------------|------------------|
| | | 2017թ. 9 ամիս | փոփոխություն | 2018թ. 9 ամիս |
| 1 | Բազմաբնակարան շենքի բնակարան | 256 | 19.1% | 305 |
| 2 | Բնակելի տուն/առանձնատուն/ | 144 | 69.4% | 244 |
| 3 | Հասարակական նշ. օբյեկտ | 90 | 17.8% | 106 |
| 4 | Արտադրական նշ. օբյեկտ | 27 | 2.2 անգամ | 60 |
| 5 | Ավտոտրանսպ. | 52 | 57.7% | 82 |
| 6 | Հողամաս | 446 | 44.2% | 643 |
| | Ընդամենը | 1015 | 41.9% | 1440 |

Առուվաճառքի գործարքներում բարձր տոկոսաչափ են կազմում հողամասերի և բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ գործարքները՝ համապատասխանաբար՝ 44.7 %-ը և 21.2 %-ը:

| Հ/հ | Անշարժ գույքի տեսակները | Ստեփանավերտ | Ասկերան | Մարտունի | Մարտավերտ | Հարրութ | Շուշի | Քաշաթաղ | Շահումյան | Հանրապետություն | Տոկոսաչափը |
|-----|----------------------------|-------------|------------|------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------------|--------------|
| 1 | Բնակարան | 224 | 9 | 34 | 4 | 4 | 29 | 1 | 0 | 305 | 21.2 |
| 2 | Բնակելի տուն /առանձնատուն/ | 96 | 26 | 41 | 21 | 10 | 24 | 24 | 2 | 244 | 16.9 |
| 3 | Ավտոտնակ | 68 | 2 | 1 | 0 | 1 | 10 | 0 | 0 | 82 | 5.7 |
| 4 | Հասար.նշ.օբ. | 62 | 4 | 6 | 11 | 2 | 11 | 10 | 0 | 106 | 7.4 |
| 5 | Արտադ.նշ.օբ. | 38 | 3 | 6 | 6 | 2 | 0 | 5 | 0 | 60 | 4.2 |
| 6 | Հողամաս | 271 | 115 | 70 | 52 | 56 | 16 | 13 | 50 | 643 | 44.7 |
| | Ընդամենը | 759 | 159 | 158 | 94 | 75 | 90 | 53 | 52 | 1440 | 100.0 |
| | Տոկոսաչափը | 52.7 | 11.0 | 11.0 | 6.5 | 5.2 | 6.3 | 3.7 | 3.6 | 100.0 | |



**Անշարժ գույքի առուվաճառքի
գործարքներից ծագող իրավունքների պետական
գրանցումների քանակական համեմատություն**



1.1 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներ

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 305 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 19.1 %-ով: Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտ քաղաքում 73.4 % (2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ 57.8 %):

Բնակելի տների/առանձնատների/ նկատմամբ իրականացվել է 244 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է՝ 69.4 %-ով:

Առանձնատների առուվաճառքների գործարքների քանակի բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտ քաղաքում 39.4% (2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ 32.7 %), իսկ ցածր՝ Շահումյանի շրջանում 0.8% (2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 1.2 %):

2017 և 2018թթ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Ստեփանակերտ քաղաքում վաճառված բազմաբնակարան շենքերի բնակարանների, բնակելի տների/առանձնատների/ առուվաճառքի (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին արժեքները և նրանց փոփոխման սահմանները.

Ստեփանակերտ քաղաքում բնակարանի 1 մ² միջին արժեքը(հազ. ՀՀ դրամ) ըստ գույքիների

| Գույքի | 2017թ. 9 ամիս | | 2018թ. 9 ամիս | | Փոփոխումը 2017թ. 9 ամսվա նկատմամբ | |
|--------|---------------|-------------|---------------|-------------|-----------------------------------|-------------|
| | Առաջնային | Երկրորդային | Առաջնային | Երկրորդային | Առաջնային | Երկրորդային |
| | | | | | | |

| | | | | | | |
|--------------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| | շուկա | շուկա | շուկա | շուկա | շուկա | շուկա |
| I | 387.0 | 246.4 | 396.9 | 248.9 | 2.6 % | 1.0 % |
| II | 381.2 | 232.8 | 391.0 | 235.2 | 2.6 % | 1.0 % |
| III | 353.4 | 224.7 | 362.5 | 227.0 | 2.6 % | 1.0 % |
| IV | - | - | - | - | - | - |
| Միջին արժեք | 373.9 | 234.7 | 383.5 | 237.0 | 2.6 % | 1.0 % |

Ծանոթություն: 1. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների /ամառանոցների/ և դրան կից շինությունների տեղադրության /տարածագնահատման գոտիականության/ գործակիցները, ինչպես նաև գոտիների սահմանագծերի նկարագիրը հաստատված է ԱՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի թիվ 286 որոշմամբ: Ստեփանակերտ քաղաքի տարածագնահատման գոտիների կադաստրային քարտեզը, տես՝ էջ 13:

2. Ստեփանակերտ քաղաքի 4-րդ գոտում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան:

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ստեփանակերտ քաղաքում 2018թ. 9 ամսում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2017 թվականի 9 ամսվա համեմատ աճել են՝ առաջնային շուկայում՝ 2.6 %, երկրորդնային շուկայում՝ 1.0%-ով:

2017 և 2018թ. 9 ամսում Ստեփանակերտ քաղաքում շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված արժեքները՝ հաշվարկված՝ շինության 1մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի արժեքը.

Ստեփանակերտ քաղաքում բնակելի տան 1 մ² միջին արժեքը (հազ. ՀՀ դրամ) ըստ գոտիների

| Գոտի | 2017թ. 9 ամիս | | 2018թ. 9 ամիս | | Փոփոխումը 2017թ. 9 ամսվա նկատմամբ | |
|--------------------|---|-------------------------|---|-------------------------|---|-------------------------|
| | Շինության 1 մ ² միջին արժեքը (ներառյալ տնամերձի արժեքը) (հազ. ՀՀ դրամ) | | Շինության 1 մ ² միջին արժեքը (ներառյալ տնամերձի արժեքը) (հազ. ՀՀ դրամ) | | Շինության 1 մ ² միջին արժեքը (ներառյալ տնամերձի արժեքը) (հազ. ՀՀ դրամ) | |
| | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո |
| I | 167.4 | 301.7 | 170.8 | 304.7 | 2.0 % | 1.0 % |
| II | 112.2 | 170.6 | 114.5 | 172.4 | 2.0 % | 1.0 % |
| III | 93.5 | 148.8 | 95.4 | 150.3 | 2.0 % | 1.0 % |
| IV | 88.7 | 116.2 | 90.5 | 117.4 | 2.0 % | 1.0 % |
| Միջին արժեք | 115.4 | 184.3 | 117.8 | 186.2 | 2.0 % | 1.0 % |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018թ. 9 ամսում Ստեփանակերտ քաղաքում անհատական բնակելի տների/կառուցված մինչև 1980թ. և 1980 թվականից հետո/ շինության 1մ² մակերեսի շուկայական միջին արժեքները 2017թ. 9 ամսվա համեմատ աճել են համապատասխանաբար՝ 2.0%-ով և 1.0%-ով:

2017 և 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության շրջկենտրոն-ներում /քաղաքներում/ վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին արժեքները և նրանց փոփոխման սահմանները.

Շրջկենտրոններում բնակարանների 1մ² միջին արժեքը


| Շրջկենտրոններ | 2017թ. 9 ամիս | 2018թ. 9 ամիս | Փոփոխումը 2017թ. 9 ամսվա նկատմամբ |
|---------------|--|---------------|-----------------------------------|
| | բնակարանի 1 մ ² միջին արժեքը /հազ. ՀՀ դրամ/ | | |
| Ասկերան | 94.0 | 96.9 | 3.1 % |
| Մարտունի | 94.0 | 96.4 | 2.6 % |
| Մարտակերտ | 67.5 | 69.5 | 3.0 % |
| Հաղրուֆ | 70.1 | 71.9 | 2.6 % |
| Շուշի | 146.9 | 155.1 | 5.6 % |
| Բերձոր | 68.3 | 72.8 | 6.6 % |
| Քարվաճառ | - | - | - |

2017 և 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության շրջկենտրոններում շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված արժեքները՝ հաշվարկված՝ շինության 1մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի արժեքը.


Շրջկենտրոններում անհատական բնակելի տների 1մ² միջին արժեքը



| Շրջկենտրոններ | 2017թ. 9 ամիս | | 2018թ. 9 ամիս | | Փոփոխումը 2017թ. | |
|---------------|---|-------------------------|---|-------------------------|---|-------------------------|
| | Շինության 1 մ ² միջին արժեքը՝ ներառյալ տնամերձի միավորի արժեքը (հազ. ՀՀ դրամ) | | Շինության 1 մ ² միջին արժեքը՝ ներառյալ տնամերձի միավորի արժեքը (հազ. ՀՀ դրամ) | | Շինության 1 մ ² միջին արժեքը՝ ներառյալ տնամերձի միավորի արժեքը (հազ. ՀՀ դրամ) | |
| | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո | Կառուցված մինչև 1980թ | Կառուցված 1980թ. և հետո |
| Ասկերան | 20.1 | 51.3 | 21.4 | 54.0 | 6.5 % | 5.3 % |
| Մարտունի | 23.1 | 49.6 | 24.4 | 51.7 | 5.6 % | 4.2 % |
| Մարտակերտ | 15.1 | 39.0 | 15.7 | 41.1 | 4.0 % | 5.4 % |
| Հաղրուֆ | 18.3 | 40.8 | 19.3 | 43.4 | 5.1 % | 6.4 % |
| Շուշի | 38.9 | 81.7 | 40.9 | 85.1 | 5.1 % | 4.2 % |
| Բերձոր | 13.5 | 28.9 | 13.9 | 30.5 | 2.9 % | 5.5 % |
| Քարվաճառ | - | - | - | - | - | - |

Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկաների համադրումը



Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն





1.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքներ

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել է 106 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 17.8%-ով:

Անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 7.4%-ը գրանցվել է հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ (2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 8.9 %-ը):


Հասարակական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտում՝ 58.5 % (2017թ. 9 ամսում՝ 66.7 %):

Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել է 60 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2017թ. 9 ամսվա համեմատ աճել է 2.2 անգամ :


Անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 2.6 %-ը գրանցվել է արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ (2017թ. 9 ամսում՝ 2.7 %-ը):

Արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափը գրանցվել է Ստեփանակերտ քաղաքում՝ 63.3 % (2017թ. 9 ամսում՝ 40.7 %):


Ստորև ներկայացվում են 2017 և 2018թթ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.




**Հասարակական նշանակության օբյեկտների
առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակական համեմատություն**



**Արտադրական նշանակության օբյեկտների
առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակների փոփոխման
դինամիկաների համադրումը**



**Արտադրական նշանակության օբյեկտների
առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների
պետական գրանցումների քանակական համեմատություն**




1.3 Հողամասերի նկատմամբ իրականացված առուվաճառքի գործարքներ

2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում իրականացվել է 2498 միավոր հողամասերի նկատմամբ իրավունքի պետական գրանցում, որից 548 միավորը՝ Ստեփանակերտ քաղաքում:

Հողամասերի նկատմամբ իրականացվել է 643 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որից 271 միավորը՝ Ստեփանակերտ քաղաքում:

Հանրապետությունում 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում հողամասերի առուվաճառքի գործարքների քանակը, 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ /446 միավոր/, աճել է 44.2%-ով :



Վաճառված հողամասերն(առանց ԴԱՀԿ կողմից գույքի իրացումների) ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 101 միավոր (178.0 հա), որից 5 միավոր(3.14 հա) Ստեփանակերտ քաղաքում
- բնակելի կառուցապատման հող՝ 275 միավոր (35.47 հա), որից Ստեփանակերտում՝ 157 միավոր (15.36 հա)
- հասարակական (խառը) կառուցապատման հող՝ 230 միավոր (25.84 հա), որից Ստեփանակերտում՝ 96 միավոր (3.79 հա)
- արդյունաբերական օբյեկտների/այդ թվում էներգետիկայի/ հող՝ 29 միավոր (6.3 հա), որից Ստեփանակերտում՝ 10 միավոր (1.57 հա):

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Ասկերանի շրջանում՝ 81.41 հա, որից 72.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Վաճառված հողերի քանակի 64.4 %-ը կամ 409 գործարք (130.75 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Ստեփանակերտում՝ 167 միավոր (14.58 հա), իսկ 35.6 %-ը կամ 226 միավորը (114.12 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Ստեփանակերտում՝ 101 միավոր (9.25 հա):

Ստորև ներկայացվում է 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ շրջանների և Ստեփանակերտ քաղաքի, որտեղ ներառված չեն ԴԱՀԿ կողմից գույքի իրացումները.

| Տարածաշրջանը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | | | | | | | | | |
|--------------|---|--------------|--------|--------------|-----------------------------------|--------------|--------|--------------|------------------------------------|--------------|--------|--------------|-------------------------------------|--------------|--------|--------------|-----------------------------------|--------------|--|--|--------------------|--|--|--|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | | | Արդյունաբերական օբյեկտների հողերի | | | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | | | Արդյունաբերական օբյեկտների հողերի | | | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | | | | | | |
| Ստեփանակերտ | 4 | 1.53 | 6 | 1.057 | 103 | 10.46 | 54 | 1.57 | 1 | 1.61 | 4 | 0.52 | 54 | 4.9 | 42 | 2.22 | | | | | | | | |
| Շուշի | - | - | - | - | 1 | 0.1 | 10 | 0.104 | - | - | - | - | 2 | 0.2 | 3 | 0.016 | | | | | | | | |
| Ասկերան | 13 | 43.98 | 10 | 1.131 | 21 | 4.22 | 32 | 0.97 | 17 | 28.45 | 1 | 0.2 | 18 | 2.45 | 1 | 0.002 | | | | | | | | |
| Մարտունի | - | - | - | - | 15 | 2.02 | 11 | 1.746 | 24 | 32.98 | - | - | 14 | 1.77 | 6 | 0.204 | | | | | | | | |
| Մարտակերտ | 2 | 3.0 | 2 | 0.35 | 11 | 2.26 | 26 | 4.09 | 7 | 10.67 | - | - | 1 | 0.1 | 1 | 0.01 | | | | | | | | |
| Հաղրուփ | 10 | 17.57 | 2 | 1.27 | 9 | 1.21 | 8 | 0.67 | 16 | 25.22 | - | - | 9 | 1.29 | 1 | 0.01 | | | | | | | | |
| Քաշաթաղ | 4 | 8.6 | - | - | 2 | 0.52 | 5 | 0.21 | - | - | - | - | 1 | 0.44 | 1 | 0.0008 | | | | | | | | |
| Շահումյան | 3 | 4.39 | 4 | 1.78 | 14 | 2.53 | 27 | 13.17 | - | - | - | - | - | - | 2 | 0.85 | | | | | | | | |

Ստորև ներկայացվում է 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ շրջանների, Ստեփանակերտ քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության:

| Տարածաշրջանը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի վաճառք | | | | | | | | | | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ վաճառք | | | | | | | | | | | | | | | | | |
|--------------|---|--------------|-------------------------------------|--------------|--------|--------------|-----------------------------------|--------------|--------|--------------|--|--------------|--------|--------------|----------|--------------|-------------------------------------|--------------|--------|--------------|-----------------------------------|--|--|--|--------------------|--|--|--|
| | Ընդամենը | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | | | Արդյունաբերական օբյեկտների հողերի | | | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | | | Արդյունաբերական օբյեկտների հողերի | | | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | Միավոր | Մակերես /հա/ | | | | | | | | |
| Ստեփանակերտ | 155 | 12.31 | 3 | 0.11 | 6 | 1.06 | 94 | 9.62 | 52 | 1.52 | 12 | 2.31 | 1 | 1.42 | - | - | 9 | 0.84 | 2 | 0.05 | | | | | | | | |
| Շուշի | 1 | 0.02 | - | - | - | - | - | - | 1 | 0.02 | 10 | 0.184 | - | - | - | - | 1 | 0.10 | 9 | 0.084 | | | | | | | | |
| Ասկերան | - | - | - | - | - | - | - | - | - | - | 76 | 50.29 | 13 | 43.98 | 10 | 1.13 | 21 | 4.22 | 32 | 0.97 | | | | | | | | |
| Մարտունի | - | - | - | - | - | - | - | - | - | - | 26 | 3.77 | - | - | - | - | 15 | 2.02 | 11 | 1.75 | | | | | | | | |
| Մարտակերտ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 41 | 9.7 | 2 | 3.0 | 2 | 0.35 | 11 | 2.26 | 26 | 4.09 | | | | | | | | |
| Հաղրուփ | 4 | 1.49 | - | - | 2 | 1.27 | 1 | 0.22 | 1 | 0.003 | 25 | 19.22 | 10 | 17.57 | - | - | 8 | 0.98 | 7 | 0.67 | | | | | | | | |
| Քաշաթաղ | 2 | 0.06 | - | - | - | - | - | - | 2 | 0.06 | 9 | 9.28 | 4 | 8.6 | - | - | 2 | 0.52 | 3 | 0.153 | | | | | | | | |
| Շահումյան | 1 | 0.22 | - | - | - | - | 1 | 0.22 | - | - | 47 | 21.6 | 3 | 4.39 | 4 | 1.78 | 13 | 2.3 | 27 | 13.17 | | | | | | | | |

արձանագրվել է պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք Ստեփանակերտ քաղաքում (1 քմ պայմանագրային միջին գինը կազմել է 422.1 ՀՀ դրամ):

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային գների վերլուծությունների արդյունքները 1 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

| Տարածաշրջանի անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ.նշ.հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղ.նշ.հողերի վաճառքների | | | | |
